«Ընկերնե՛ր, ապրիլ 28–ին ռադիոն հաղորդեց մեզ այն ուրախալի լուրը, որ ադրբէջանական բէգերի ու խաների հակայեղափոխական կառավարութիւնն ընկել է և իշխանութիւնը անցել է մեր կոմունիստ ընկերների ձեռքը: Այս ուրախալի լուրն իսկոյն տարածուեց ամբողջ Հայաստանում: Հէնց որ կատարուած դէպքը յայտնի դարձաւ Հայաստանի բանուորներին ու գիւղացիներին, նրանք սկսեցին պատրաստուել՝ թօթափելու դաշնակների հակայեղափոխական կառավարութեան լուծը և մայիս 11–ին բարձրացրին ապստամբութեան կարմիր դրօշը: Զգալով կարմիր վտանգը՝ դաշնակները դիմեցին իրենց սովորական զէնքին ու պրովոկացիային: Նրանք տարածեցին, որ նոր Ադրբէջանում իշխանութիւնը բոլշևիկեան չէ և որ Բագուի կարմիր յեղաշրջման լուրերը տարածում են տեղական հայ կոմունիստները, որը չի համապատասխանում իրականութեան: Նրանք սպառնում էին, որ եթէ ազգաբնակութիւնը հետևի բոլշևիկներին, Ամերիկան Հայաստանին հաց չի տայ: Նրանք յօրինեցին կեղծ նոտաներ, որոնք, իբր թէ, Խորհրդային Ադրբէջանի կողմից ուղղուած են եղել Հայաստանին՝ նրա վրայով գօրք տեղափոխելու Տաճկաստանին օգնելու նպատակով: Բարեբախտաբար, այս պրովոկացիաները յաջողութիւն չունեցան և մայիս 12–ին Ալեքսանդրապոլի պրոլետարիատը չքաւոր գիւղացիութեան ու զինուորների հետ տապալեց Ալեքսանդրապոլում դաշնակների ատելի իշխանութիւնը և սկսեց առաջ շարժուել Կարսի, Սարըղամիշի, Ղարաքիլիսայի և Երևանի ուղղութեամբ:

Ի պատասխան դրան դաշնակները արտաքին պատերազմ առաջացրին բէյոյլիք–վեդիցիների և Իդդիրի, Սարըղամիշի ու Կարսի քիւրդերի հետ, որով գրաւեցին կարմիր զինուորների ուշադրութիւնը, մինչև իրենք մաուզէրիստների 3000–ոց բանդայի ու կաշառուած դենիկինեան սպաների գլուխ անցած՝ թիկունքից յարձակուեցին կարմիր Ալեքսանդրապոլի փոքրաթիւ պահակախմբի վրա: Կոտորելով երկու հազար անպաշտպան բանուորներ ու գիւղացիներ՝ նրանք վերականգնեցին իրենց հակայեղափոխական իշխանութիւնը:

Դաշնակների ահաբեկման սիստեմը սոսկալի է. ամէն մի կոմունիստի տեղն ու տեղը խփում են: Շատ ընկերների վիճակը մեզ անյայտ է: Բայց դա չի ընկճել հայ պրոլետարիատի կամքը. նա պատրաստ է նորից ապստամբելու: Մենք եկել ենք ձեզ հետ կապ հաստատելու: Հայաստանը սպասում է ռուս կարմիր զօրքերին, և երբ նրանք ոտք կը դնեն Հայաստանի հողի վրա, ո՛չ մի հայ զինուոր, նոյնիսկ դաշնակցական չի համարձակուի կրակել նրանց դէմ:

Դիլիջանի գաւառի ռազմա–յեղափոխական կոմիտէի անդամ Կոստեա Այվազեան. տեղական կոմունիստական կուսակցութեան ներկայացուցիչ՝ Յակոբ Յակոբեան»:

Նոյն «Կոմունիստ»–ը յունիս 20–ին հրատարակում էր հետևեալ դիմումը Հայաստանի կառավարութեան.

«Ադրբէջանի կոմունիստական կուսակցութեան կենտրոնական կոմիտէին և Խորհրդային Ադրբէջանում գտնուող Ռուսաստանի կարմիր զօրքերին յայտնի է, որ ձեր կառավարութիւնը Հայաստանում այժմ խեղդում է բանուորների և գիւղացիների շարժումը: Կովկասեան հակայեղափոխական կառավարութիւններից ո՛չ մէկը իր բանուորների և գիւղացիների դէմ չի ցուցահանել այնպիսի դաժանութիւն, ինչպիսին գործադրում է ձեր կառավարութիւնը Հայաստանում կոմունիստ գիւղացիների և բանուորների դէմ: Յենուելով մաուզէրիստների գլխաւոր դահիճ Սեպուհի և դենիկինեան սպաների վրա՝ դուք Հայաստանի գիւղացիներին և բանուորներին օրէնքից դուրս